

ծծմբակը՝ լուծելու համար կը տաքըրնեն, և հետը կիր կամ երկաթ կը խառնեն, որպէս զի ծծումբը կրին կամ երկաթին հետ խառնուի, և սնդիկը բուրովին մաքրուի: Վմանապէս եթէ մետաղաց ծծմբուտներու մէջ թթուածին ալ գտնուի, այն ժամանակը քիչ մը ածուխ ալ կը նետեն մէջը՝ որպէս զի թթուածինը ածուխի հետ միանալով ցնդի, մետաղն ալ մաքուր ըլլայ:

Ծծումբը երկրիս վրայ շատ տարածուած է, մանաւանդ վառած կամ մարած հրաբուխ լեռանց կողմերը շատ կը գտնուի. բնաւ օտար մարմնոց հետ բաղկացեալ չէ, այլ ՚ի բնէ մինակ է, և հողի, կաւի կամ հերձաքարի հետ խառն է:

Ծծումբը զբտելու համար կերպ կերպ եղանակներ կան, բայց մեր զրած եղանակը հասարակօրէն շատ տեղ կը գործածուի, և այս է: Ծծումբին մետաղը կ'աւնետս կը փշրես, հողէ կամ կապարէ մեծ թորանոցի մէջ կը դնես և քիչ քիչ հետ գճետէ կը տաքըրնես. հողը կը հալի, ծծումբը կը ցնդի, և խողովակներով կուգայ կապարեայ սենեկի մը մէջ. այն սենեկէն ուրիշ սենեկի մը մէջ կ'անցնի, այսպէս չորս կամ հինգ սենեակ կայ որ իրարու հետ կապարէ խողովակով կը հաղորդին. երբոր ցնդած ծծումբը վերջին սենեկին մէջ կը հասնի, այն սենեկին յատակը ծուռ և վարի դին ծակ ըլլալով՝ ծծումբը կը թափի, և այն ծակէն դուրս կը վազէ թնդանօթի պէս: Եթէ ծծումբին հանքը հարուստ ըլլայ, մէկ թորումը հերիք է. այլ եթէ չըլլայ, երկու թորում ալ կարող ես ընել:

Ծծումբը հարկաւոր մետաղներու կարգը կրնայ սեպուիլ, վասն զի իւր առաջին օգուտը վառօդագործութեան մէջ գործածուիլն է. յետոյ վերջիչեալ երկու տեսակ թթուն շինելու կը գործածեն. բնալուծութեան մէջ ալ շատ բանի օգտակար է:

1 Sulfure de mercure.

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս անիլին:

ՍԱՆԻՒԼԻՆ աղնիւ համեմներէն մէկն է, թէպէտ և շատը չեն գիտեր ասոր ինչ բոյս ըլլալը: Ս անիլիայի բոյսը Վերիկային մէջտեղուանքը հասարակածին տակը կը բուսնի. բայց այրեցած գօտիին տակ ընկած ամէն երկրներն ալ իրեն չեն յարմարիր. աւելի ծովեզերեայ տեղուանք, ուր որ ծովուն երեսէն անոյշ հովեր կը փչեն, ու զետերուն քովերը կը բուսնի, աղէկ առաջ գարուն համար ալ պէտք է որ բուրտիքը անտառներով պաշտպանուած ըլլայ:

Ս անիլիան ծլելուն պէս՝ զէպ ՚ի իրեն մօտ եղած ծառը կ'երկրնայ ու իր ճկուն ճիւղերովն ու ծիլերովը՝ անոր պլուելով ինչուան ծառին ծայրը կը հասնի քիչ ատենի մէջ, ու կանաչ դմբէթ մը կը ձևանայ: Ս անիլիային գլխաւոր ցօղունները կանաչ են՝ մէկ մասի հաստութեամբ, մէջն ալ խրժային կաշուն հիւթ մը ունի. աս ցօղունները ծունկ ծունկ են՝ եղէգի պէս. ամէն մէկ ծունկին տեղէն մէյմէկ տերև ու ծիլ կ'ելլէ. աս տերևները որչափ քիչ ըլլան՝ այնչափ խոշոր կ'ըլլան՝ երկայնութիւնսին ինը տասը բթաչափ, իսկ լայնութիւնսին իրեք չորս: Չեւերնին երկայն հաւերթածէ է, ծայրերնին սուր, գոյներնին ազուոր կանաչ, կակուղ ու ողորկ ու զէպ ՚ի երկայնքը ջղեր ունին. և որովհետև վրայի երեսնին գոգաւոր է, անոր համար ջըրհորգանի՝ կը նմանին: Կիլերը որթին ծիլերուն կը նմանին, որ տերևներէն կարճ կ'ըլլան ու անոնց հակառակ կողմէն բուսած, այսինքն տերևները ճիւղերուն ան կողմը չեն բուսնիր՝ որ կողմէն որ ծիլերով ծառերուն վրայ կը պլուի, հապա անոնց հակառակ կողմէն:

Ս անիլիային ծաղկները իր շխտակ

Ճիւղերուն վրայէն կը բուսնին . աս ծաղկընէրը խոշոր ու աղուոր են , ներսուանց ճերմակ , իսկ դրսուանց դեղին կանաչ , և ողկուզաձև կը կախուին , բայց ամենեւին հոտ չունին . մայիս ամսուն մէջ կը բայուին : Ատուղը եօթը ութը բթաչափ երկայն է . իսկ հաստութիւնը ճկոյթ մատի չափ է քիչ մը ծուռ աղեղնաձև . կակուղ միս մը ունի ու քանի որ հասուննայ՝ կը սենայ , ու ետքը երկու կը ճղքուի . մէջն ալ խել մը մանր մանր կուտեր կան սև ու անհոտ : Ա՛յն մէկ բոյսը յիսունի չափ պտուղ կը բերէ :

Ինքնիրենը որչափ որ պարզ բոյս մը կ'երեւնայ վանիլիան , այնչափ ալ աւելի անտառներուն զարդ կ'ըլլայ . վասն զի ծառերուն մերկ բուններուն վրայ պրլուելով՝ ան ծառերը մէկմէկու հետ կը կապէ : Արբոր իրեն յարմար հող գտնէ , առանց մասնաւոր խնամքի կարօտ ըլլալու առաջ կուգայ . բայց պտուղը պահելու համար շատ հոգ պէտք է : Առինէացիք տասուերկուքական պրտուղ կ'առնեն ու կօթին կողմէն դերձանի մը վրայ կ'անցընեն , յետոյ ջուրը եփ կը հանեն ու զանոնք մէջը կը խօթեն որ շուտ մը կը ճերմըկին . յետոյ կը հանեն՝ դերձանին երկու ծայրէն կը կախեն քանի մը ժամ արևուն մէջ : Արկորդդ օրը փետուրով մը վրան եղ կը քսեն որ կամաց կամաց չորնայ , չանայ ու միշտ կակուղ մնայ . և որպէս զի պտուղը երկու չափնուի՝ եղի մէջ թաթխած բամբակով կը պատեն : Վրանի որ չորցընելու համար կը թողուն , պտղին ծայրէն կաչուն ու առատ հիւթ մը կը վազէ . երբոր բոլոր կը վազէ աս խժային հիւթը , պտղին ձևը կը փոխուի կը բարակնայ , կը սենայ , ու կակղութիւնը պահելով կը չորնայ . ան ատեն կ'առնեն ապիկած ամանի մէջ կը դնեն որ թարմ մնայ . երբեմն երբեմն կը բանան ու կը նային որ եղը խիստ շատ չըլլայ , որպէս զի աղէկ հոտը չկորսուի :

Նախելու վանիլիային աղէկ տեսակը մութ կարմիր կ'ըլլայ , առաձգական

և մոտ ու հոտը քիչ . ամանը բանալու որ ըլլա՝ սև թանձր ու խժային հիւթով մը լեցուած կ'ըլլայ . ան հեղանիւթին վրայ ալ ամենամանր սև հուն տերով ծածկած կ'ըլլայ , անանկ սաստիկ ու անոյշ հոտ մը ունի որ մարդս անով կը զինովնայ :

Վանիլիան շատ տեսակ բաներու մէջ կը գործածուի , ինչպէս շաքարեղէններու ու դեղերու մէջ . աւելի օգտակար է տկար ստամոքս ունեցողներուն ու որոնց որ արեան շրջանը դանդաղ է . ըսել է թէ ջրոտ ուժով ու տաքարիւն պատանիները պէտք չէ գործածեն :

Սուրբ Գումինիկոս կղզւոյն մէջ , Վայեննայի , Վարաքի ու Արթագի նէի ծովեղերքը ու Վանամայի պարանոցը շատ կը գտնուի . զարմնաք է որ նոյն տեսակ երկիրներ գաղթական գընացողները վանիլիայի բոյսը չեն մշակեր նաև իրենց երկիրին մէջ , թէպէտ և խիստ քիչ հոգ կ'ուզէ . ճիւղ մը որ տաշտաթաղ ընելով տնկես , երբորդ տարուրնէն կը սկսի պտուղ տալ՝ ինչուան քառասուն տարի :



ԵՐԵՒԱՍԱՆԻ ԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ԻՄԱՍՏՈՒՆ առանց գործոյ .
- Ալևոր առանց կարգի .
- Երիտասարդ առանց հնազանդութեան .
- Տօլվաթուրն առանց ողորմութեան .
- Կին առանց զգուշութեան .
- Իշխան առանց առաքինութեան .
- Քրիստոնէայ կուռոյ .
- Աղքատն՝ հպարտ .
- Արքայն անիրաւ .
- Եպիսկոպոս ագէտ .
- Ժողովուրդն անիրաւ .
- Եւ վերջինն , Աղք մի առանց պատգամի :

ՈՍԿԻՓՈՐԻԿ

